# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆ

—օ—

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

*Չորեքշաբթի, սեպտ. 25-ին, երեկոյեան ժամը 7-ին կայացաւ Թիֆլիսի վաճառականների ընդհանուր ժողովը Բօրսայի դահլիճում։*

*Վաճառականների աւագ Արշակ Միլեան, որի հրաւէրով կայացել էր ժողովը, բանալով նիստը, հետեւեալ ատենաբանութիւնը արեց.*

*«Պարոնայք. ես թոյլ տուի ինձ անհանգստացնել ձեզ, հրաւիրելով, որպէսզի միասին քննենք մի շատ կարեւոր հարց։ Խնդիրն այն է, որ այս հոկտեմբերի 12-ին լրանում է հայկական այբուբենի գիւտի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400-ամեակի յօբելեանը։ Այդ առիթով մեր հայոց բարձր հոգեւոր իշխանութիւնը որոշել է տօնել այդ դէպքը արժանաւոր կերպով և հրաւիրել է մեզ ևս մասնակցել։ Պարոնայք, այդ յօբելեանը մի հայկական ազգային կուլտուրական այնպիսի տօն է, որին կարող են նախանձել շատ ուրիշ ազգեր. մենք բոլոր հայերս, իբրև մի մարդ, առանց համոզմունքների և հայեացքների խտրութեան, պարտաւոր ենք լայն մասնակցութիւն ունենալ այդ տօնախմբութեան մէջ և, որ գլխաւորն է, յաւերժացնել նրան մի էական գործով յօգուտ դպրոցական ֆօնդի։*

*«Ի նկատի ունենալով, որ այստեղ ներկայ եղողներից շատերը, իմ կարծիքով, ծանօթ չեն հայկական այբուբենի գիւտի և տպագրութեան պատմութեան հետ, ես ինձ թոյլ տուի հրաւիրել բարձրապատիւ Բենիկ վարդապետին, որ նա ծանօթացնէ մեզ այդ պատմութեան հետ և ապա առաջարկել ձեզ որոշել վաճառականների մասնակցութեան ձևը»։*

*Խօսքը տրվում է Բենիկ վարդապետին, որ մի գեղեցիկ ատենաբանութեամբ նկարագրում է ս. Սահակի և ս. Մեսրոպի գործունէութիւնը և նշանաւոր երկու դէպքերի պատմութիւնը։*

*Վաճառականութեան ներկայացուցիչները պատրաստակամութիւն յայտնեցին նուիրել նաև իրանց անձնական միջոցներից մի քանի հազար րուբլի յօգուտ դպրոցական ֆօնդի։*

*Աւագ Ա. Միլեան առաջարկեց հետեւեալ ծրագիրը, որ և ընդունվեց միաձայն.*

### Ծրագիր

*Մասնակցութիւն Թիֆլիսի վաճառականութեան առաջիկայ տօնախմբութիւններին հայկական այբուբենի գիւտի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400-ամեակի առիթով, մշակված Թիֆլիսի վաճառականների աւագ Ա. Միլեանի առաջարկութեամբ, վաճառականութեան ներկայացուցիչների ձեռքով, 1913 թ. սեպտեմբերի 25-ի խորհրդակցութեան մէջ։*

*1) Ի յիշատակ ս. Սահակի և ս. Մեսրոպի հանդիսաւոր հոգեհանգիստ կատարելու օրը փակել մագազինները ամբողջ օր և ներկայ լինել հոգեհանգստին ամբողջ վաճառականութեամբ։*

*2) Ընտրել Թիֆլիսի վաճառականութեան կողմից երկու պատգամաւորութիւն՝ ներկայ լինելու հանդէսներին այստեղ՝ Թիֆլիսում և Էջմիածնում։ Առաջին պատգամաւորութիւնը բաղկացած կը լինի 6, իսկ երկրորդը՝ 10 հոգուց։*

*3) Պաշտօն յանձնել պատգամաւորութեան ներկայացնել շնորհաւորութիւն Թիֆլիսի վաճառականութեան անունից հայոց եկեղեցու պետ՝ Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ V-ին Էջմիածնում, իսկ այստեղ՝ տեղական առաջնորդին, այդ դէպքի առիթով։*

*4) Խնդրել Թիֆլիսի վաճառականութեան հիմնած Թիֆլիսի առևտրական դպրոցի պ. վերատեսչին, հանդէսների օրը արձակել հայ աշակերտներին զբաղմունքից դպրոցում։*

*5) Խնդրել միենոյնը վաճառականութեան հիմնած Մանթաշեան առևտրական դպրոցի տեսչին։*

*6) Ի յիշատակ առաջիկայ յօբելեանական տօնախմբութիւնների ձեռք բերել առևտրական վերոյիշեալ երկու դպրոցների աշակերտների, ինչպէս և Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանի ուսանողներին բաժանելու համար ս. Սահակի և ս. Մեսրոպի պատկերներից 500-ական հատ։*

*7) Հանգանակել վաճառականների մէջ գումար դպրոցական ֆօնդի կազմութեան համար։*

*8) Ընտրել Թիֆլիսի վաճառականների կողմից 5 հոգի թեմական առաջնորդի կողմից կազմելի մասնաժողովի համար՝ առաջիկայ յօբելեանական հանդէսների կազման համար։*

—

*Ինչպէս մեզ տեղեկացնում են, հանգանակութիւնը վաճառականների մէջ բացվել է արդէն և բաւական աջող առաջ է գնում։ Պատգամաւորութեան անդամների անունները կը հաղորդենք իր ժամանակին։*

—

*Յոյս ունենք, որ վաճառականութեան օրինակին կը հետևեն նաև մէշչանները, արհեստաւորները և բանւորները, ի նկատի ունենալով, որ Էջմիածնում կատարվելիք տօնախմբութիւնը ոչ միայն եկեղեցական-ազգային, այլ և կուլտուրական, քաղաքակրթական մեծ տօն է։*